92

ՀԵ 14, Էլմ. 612, Սաղմ.92
1. Մի, պայծառ ու գեղեցիկ օրն Տերունի,
Կողջունենք Քու լույսդ զմայլելի,
Որ, այս գիշերվան խավարը ցրելով,
Փայլեցավ ժպիտներով:

Մի, օր խաղաղ, սուրբ օր երկնային,
Օր սեպհական աստվածային,
Առավոտ զվարթարար ու Տերունի,
Ողջո՛ւյն Քեզ, լույսդ բերկրալի:

2. Վեց օրերն աշխատության անցան, գացին,
Մարմնավոր գործերն վերջացուցինք,
Արդ ուրախանանք, հասավ օրն հանգստյան,
Օրն զվարթ, Տերունական:

3. Ուստի վայելենք այս պատվական ժամերն,
Ինչպես պատվիրեց Աստված՝ մեր Տերն,
Որ առաջնորդվինք երկնից սուրբ հանգստյան,
Վայելենք փառք հավիտյան:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025